Պետրոսյան Դ. Վ.
Նոր մեդիայի և հաղորդակցության
ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր
Էլ. փոստ՝ davidpetrosyan@ysu.am

ԱԶԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ «ՓՈՐՁ» ԱՄՍԱԳՐՈՒՄ (1876-1881 ԹԹ.)

Բանալի բառեր - *հայ ժողովուրդ, արևելահայ, արևմտահայ հայրվածներ, ազգային արժեհամակարգ, պահպանողական հոսանք, ազգություն, քաղաքական ազատություն, ինքնավարություն*

Ազգային արժեհամակարգը՝ իբրև տվյալ ազգի մտահոգնոր հարստության մնայուն գործոն, սնվում է արքետիպային իրողություններով, բայց և ժամանակի ընթացքում կարող է փոփոխություններ կրել: Այդ համակարգի որոշ հատկանիշներ, կախված տվյալ դարաշրջանում ազգային-պետական կառուցվածքի յուրահատկություններից, մղվում են երկրորդ պլան: Դա նկատելի է հատկապես այն ժամանակ, երբ առաջնային են դառնում ազգի գոյատևման խնդիրը, ինքնապահպանման բնազդը:

Այսպիսին էր պետականազուրկ հայ ժողովրդի վիճակը 19-րդ դարում: Ուստի նրա մտավոր էլիտան (ընտրախավը) փորձում էր ազգային ինքնագիտակցության խթանմամբ վերստին ստեղծել գաղափարական այն արժեհամակարգը, որ նախորդ դարերի ընթացքում խամրել կամ մոռացության էր մատնվել:

Այս նպատակն էին հետապնդում 19-րդ դարի երկրորդ կեսին հայ իրականության մեջ կազմավորված հոսանքները, որոնց ներկայացուցիչները, գաղափարական այս կամ այն ուղղությանը տուրք տալով, իրենց պարբերականներում առաջարկում էին ազգային առաջընթացի սեփական ըմբռնումները: Դրանով իսկ ուղղակիորեն թե անուղղակիորեն նրանք արծարծում էին ազգային արժեհամակարգի մի շարք խնդիրներ, որոնց վերանայումը ժամանակի հրամայականն էր:

Այդ տասնամյակներին գաղափարապես ամենաազդեցիկը պահպանողական հոսանքն էր, որի մամուլի օրգանների, դրանց խմբագիրների, աշխատակիցների մասին պատմաքննական մի շարք ուսումնասիրություններ են գրվել հայ մամուլի պատմաբանների կողմից[1]:

Մեր նպատակն է քննության առնել «Փորձ» ամսագրի (1876-1881 թթ., խմբագիր՝ Աբգար Հովհաննիսյան) էջերում ազգային համակարգի երկու բաղադրիչները՝ ազգությունը և քաղաքական ազատությունը մարմնավորող առանցքային մի քանի դրույթներ և դրանց մատուցման առանձնահատկությունները պահպանողական գաղափարախոսության դիտանկյունից:

***

Մինչ նշված խնդրին անդրադառնալը մի քանի խոսք պահպանողական հոսանքի գաղափարական հայեցակարգի մասին: Պահպանողականությունը սկիզբ է առել 18-րդ դարի վերջին Եվրոպայում: Նրա գաղափարախոսներից մասնավորապես Է. Բերքը գտնում էր, որ «քաղաքական սկզբունքները պետք է հարմարեցնել ազգային ավանդույթներին, սովորույթներին և հասարակական-քաղաքական ինստիտուտների արդեն արմատավորված ձևերին»: Եվ հասարակության նպատակն է ոչ թե թվացյալ ազատությունների ստեղծումը, «որը հանգեցնում է համընդհանուր անարխիայի, այլ արդեն գոյություն ունեցող ավանդույթների վրա հիմնված ազատությունների պահպանումը»[2]:

Պահպանողականության առանցքային դրույթները դրված են նաև 19-րդ դարի երկրորդ կեսին ձևավորված հայ ազգային-

---

[1] Տե՛ս մասնավորապես **Մխիթարյան Մ. Հ.,** XIX դարի երկրորդ կեսի արեւելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1976, **Հովհաննիսյան Ա.,** 19-րդ դարի 50-60-ական թվականների արեւելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, «Պատմա-բանասիրական հանդես» (ՀՍՍՌ ԳԱ), 1965, № 4. էջ 55-78, 1966, № 1, էջ 33-62, **Խառատյան Ա.,** Հայ հասարակական հոսանքները XIX դ. 50-70-ական թվականներին, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2006, N 1, էջ 272-284 և այլն:

[2] **Մարգարյան Մ.,** Պահպանողականություն, «Պահպանողական հոսանքներ և գաղափարներ», Եր., 2010, էջ 6:

պահպանողական հոսանքի գաղափարական հիմքում: Մասնավորապես այդ հոսանքի գլխավոր՝ ազգային պահպանողական թևի ներկայացուցիչները, մերօրյա հետազոտողի կարծիքով, ելնում էին «արևմտահայ և արևելահայ հատվածների, ինչպես և գաղթօջախների հայության ազգային-հոգևոր միասնության գաղափարից: Հայ Առաքելական եկեղեցու ավանդույթների, դավանական ինքնության, ազգային լեզվի պահպանության ու մշակման և դրանց ընդառաջող կրթության ու լուսավորության համակարգի ստեղծումը այն նշանախեցն էր, որի վրա ազգային պահպանողականները հիմնում էին իրենց աշխարհայացքային կողմնորոշումները»[3]:

Մինչ «Փորձ» ամսագրի հանդես գալը պահպանողական և լիբերալ ուղղությունների կողմնակիցները որոշակի ճանապարհ էին անցել: 1850-60-ականներին ազգի վաղվա օրվա, նրա հասարակական-տնտեսական կառուցվածքների, լեզվի, եկեղեցու և մի շարք այլ հիմնախնդիրների շուրջ սուր բանակռիվներ էին ընթացել արևելահայ ու արևմտահայ պարբերականների էջերում. դրանք շարունակվում էին նաև 70-ական թվականներին: Ուստի «Փորձ»-ի խմբագիրը նախքան հանդեսի հրատարակումը ճշտում է իր գաղափարական դիրքորոշումը և ամսագրի առիթով հրապարակած «Հայտարարության» մեջ մասնավորապես ընդգծում, որ ինքը շարունակելու է նախորդ պարբերականներից «Հյուսիսափայլ»-ի և «Կռունկ հայոց աշխարհին»-ի սկսած գործը[4]: Խմբագրի նախընտրած պարբերականներն արդեն իսկ խոսում են նրա աշխարհայեցողության սահմանների մասին: «Հյուսիսափայլ»-ը լուսավորական, դեմոկրատական գաղափարներ քարոզող ամսագիր էր: Վերջինիս հետ իր հոգեհարազատությամբ Աբգար Հովհաննիսյանը նախապատրաստում էր լարանին, որ «Մշակ»-ի՝ պահպանողականների հասցեին արվող բնութագրումները միակողմանի են և չեն համա-

---

[3] **Խառատյան Ա.,** Հայ հասարակական հոսանքները XIX դ. 50-70-ական թվականներին, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2006, N 1, էջ 273:

[4] Տե՛ս **Մխիթարյան Մ. Հ.,** XIX դարի երկրորդ կեսի արեւելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1976, էջ 129-130:

պատասխանում ազգային արժեհամակարգի այն ըմբռնումներին, որոնցով հանդես են գալու «Փորձ»-ի խմբագիրը և իր թիմակիցները: Այդ արժեհամակարգի երկու դրույթների՝ ազգության և քաղաքական ազատության քննությամբ փորձենք մատնանշել ամսագրի գաղափարական ընթացքը 1870-ական թթ. վերջին:

1. Ազգության խնդիրը «Փորձ»-ի էջերում

Դեռևս 18-րդ դարավերջին սկիզբ առած քաղաքակրթական նոր շարժումը, ի դեմս ֆրանսիական հեղափոխության, ազգային ինքնագիտակցության արթնացման զորեղ խթան հանդիսացավ եվրոպական ազգերի համար: Ազգության գաղափարը, եվրոպացի որոշ տեսաբանների կարծիքով, դարձել էր 19-րդ դարի գլխավոր «հատկանիշը»[5]:

Ազգության խնդիրը արևելահայ պարբերականներում առանձնակի սրությամբ դրվեց դարի երկրորդ կեսին: Վերջինիս կարևորությունն ընդգծում էին հատկապես Ստ. Նազարյանն ու Մ. Նալբանդյանը, որոնք, քաջատեղյակ լինելով եվրոպական մտածողների աշխատություններին, «Հյուսիսափայլ»-ի էջերում հիմնահարցը քննում էին հայ իրականության համատեքստում: Նշելով, որ «ազգությունը ապրում է, եթե նորա մեջ կա արտաքին, ավերիչ ուժերի հավասարակշիռ զորություն», Նալբանդյանը համոզված էր, որ, «եթե չկա այդ զորությունը, արտաքին ուժերը, հաղթահարելով ազգությունը, լուծում են նորա կազմվածքը»[6]:

«Փորձ»-ի տեսաբանները շարունակում են ընդլայնել «Հյուսիսափայլ»-ի գաղափարախոսների մտորումները հայ ազգի անցած ճանապարհի, ներկա դրության, քաղաքակիրթ ազգերի շարքում նրա արժեհամակարգը վերականգնելու և մի շարք այլ խնդիրների շուրջ: Այս հարցում ակտիվ էին հատկապես «Փորձ»-ի աշխատակիցներ Ստեփանոս Պալասանյանը և Ալեքսանդր Երիցյանը: Եր-

---

[5] Տե՛ս «Ազգության խնդիրը, պրոֆեսոր Զիգֆրիդ Բրի», «Փորձ», Թիֆլիս, 1877, թիվ 3, էջ 203:

[6] **Նալբանդյան Մ.,** Երկեր, «Սովետական գրող» հրատ., Եր., 1985, էջ 505:

կուսն էլ քաջատեղյակ էին այդ տասնամյակներին ազգության մասին եվրոպական տեսական մտքի խոշոր ներկայացուցիչների աշխատություններին: Ուստի «Փորձ»-ի հրատարակության առաջին իսկ տարիներին նրա էջերում, ինքնուրույն հոդվածներից բացի, թարգմանաբար տպագրվում են գերմանացի պրոֆեսոր Զիգֆրիդ Բրիի՝ ազգության խնդրի մասին կարդացած դասախոսությունը[7], «Ազգերի զարգացման օրենքները» խորագրով հոդվածը[8] (ֆրանսերենից հայերեն փոխադրել էր Ստ. Պալասանյանը) և այլ հրապարակումներ: Ստ. Պալասանյանը որոշ ժամանակ անց ինքն է տպագրում ծավալուն մի հոդված՝ «Տասնիններորդ դարու նշանաբանը», հանգամանորեն ներկայացնում է ազգության խնդրին առնչվող հիմնարար դրույթները և հայոց ազգային ինքնության, նրա դարավոր ու ներկա ընթացքի հիմնական ուղղությունները:

Հեղինակին հուզում է ազգության խնդիրն իր ամբողջության մեջ, ինչը ենթադրում է այդ գաղափարի քննությունը մի շարք հարթություններում՝ ազգություն-քաղաքակրթական առաջադիմություն, ազգություն-քրիստոնեություն, ազգություն-ընկերային կյանքի երևույթներ (սեփականության իրավունք, լեզու, ավանդութներ, քաղաքական կյանք, պետություն և այլն): Հիշյալ խնդիրների տեսական քննությունը հիմք է տալիս Պալասանյանին անցում կատարելու դեպի ազգային փոխհարաբերություններ[9] և կանգ առնելու մասնավորապես մեծ և փոքր ազգերի գոյության իրավունքի, նրանց զարգացման հեռանկարների վրա:

Այս համատեքստում ուշագրավ են հայության՝ իբրև ազգային միավորի մասին նրա մտորումները: Աշխատության վերջում հռետորական հարց հնչեցնելով՝ «Հայաստան աշխարհը արժանի՞ է արդյոք արևմտյան ազգերի համակրությանը…», Պալասանյանը դրական եզրակացությունների է հանգում՝ մասնավորապես նշելով.

---

[7] «Ազգության խնդիրը, պրոֆեսոր Զիգֆրիդ Բրի», «Փորձ», 1877, թիվ 3, էջ 202-219:
[8] Տե՛ս «Ազգերի զարգացման օրենքները», «Փորձ», 1877, թիվ 3, էջ 222-256:
[9] Ի դեպ, հոդվածում հստակորեն տարանջատված չեն «ազգ» և «ազգություն» հասկացությունները: Հիմնական մասում «ազգությունը» դիտարկվում է իբրև ազգային առանձնահատկությունների էութենական բնութագրում, թեև որոշ տեղերում ազգությունը ներկայացվում է նաև «ազգ» իմաստով:

«Ոչ ոք կարող չէ գոյության իրավունքից զրկել այն ազգին, որի ուսերի վրա բարձած էր անցյալում քրիստոնեական գաղափարի համար տված պատերազմի ծանրությունը, և որին, նույնիսկ արևմտյան ազգերի կարծիքով, վիճակված է ապագայում նոր քաղաքակրթության միջնորդ հանդիսանալ եվրոպական և ասիական ազգերի մեջ»[10]:

2. Քաղաքական ազատություն. խնդիրներ և հեռանկարներ

Ազգության խնդրի արդիական հնչեղությունը, վերջինիս շուրջ «Փորձ»-ի հեղինակների մտորումները նրանց մղում են հաջորդ կարևոր հանգրվանին. դարավոր ավանդույթներով հարուստ, ձևավորված ազգի զարգացման ընթացքն անհնար է պատկերացնել առանց նրա քաղաքական ազատության: Խնդրի դրվածքն առավել սուր բնույթ է ստանում 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին: Ամսագրի՝ այս շրջանում լույս տեսած համարներում տպագրվում են մի շարք հոդվածներ, որոնցում փորձ է արվում համատեղելու միջազգային պրակտիկան և ազգային կյանքի քաղաքական հնարավորություններից բխող ներքին միտումները:

«Փորձ»-ի 1877-1878 թթ. 1-4 համարների հրապարակումների վերնագրերն արդեն իսկ խոսուն են՝ «Տաճկաստանի հայոց իրավունքները և նոցա սահմանադրությունը» (1876, NN 1, 2, 1877, NN 3, 4), «Տաճկական Հայաստանի անկախությունը» (1877-1878, N1), «Տաճկական Հայաստանի ինքնավարությունը» (1877-1878, N3), «Տաճկական Հայաստանի ազատությունը և անգլիական մամուլը» (1877-1878, N2) և այլն: Սրանց զուգահեռ՝ հոդվածագիրների տեսադաշտում են եվրոպական փոքր ազգերի (հույներ, սերբեր, բուլղարներ) պայքարը իրենց քաղաքական ազատության համար և այդ հարթակում մեծ տերությունների դիվանագիտական խաղերը:

Տվյալ դեպքում մեզ հետաքրքրողը «Փորձ»-ի հեղինակների այն հիմնավորումներն են, որոնք հնարավորություն կտային հայե-

[10] **Պալասանյան Ս.,** Տասնհիններորդ դարու նշանաբանը, «Փորձ», 1877-1878, թիվ 1, էջ 133:

ին իրենց քաղաքական ազատությանը խոչընդոտող արգելքները հաղթահարելու:

Ընդհանրացնենք առավել կարևորները՝

ա) Հայկ Նահապետի՝ մեզ ավանդած անկախության արքետիպը և նրա վերարթնացումը 19-րդ դարի քաղաքակրթական նոր զարգացումների պայմաններում,

բ) հայ ազգի դարավոր ինքնամեկուսացումը. օտարների կարծիքը նրա մասին,

գ) հայերի նոր առաքելությունը՝ միջնորդ դառնալու Արևմուտքի և Արևելքի միջև,

դ) Արևմտյան (Տաճկական) Հայաստանի՝ իբրև առանձին քաղաքական միավորի ինքնավարությունը, նրա օգտակարությունը տարածաշրջանի համար:

Նշված ընդհանրացումներից յուրաքանչյուրը «Փորձ»-ի հոդվածներում ներկայացվում է համապատասխան փաստերով ու փաստարկումներով: Ավելին՝ հարկ եղած դեպքում հեղինակները հռետորական և հուզական երանգներ են հաղորդում իրենց խոսքին՝ ընթերցողի ազգային արժանապատվությունը վերստին արթնացնելու մղումով. «Հայկը ներշնչել է մեր մեջ անկախության ոգին, Արամը ժառանգել է մեզ անձնվեր հայրենասիրություն, Արտաշեսներն ու Տիգրանները-անվեհեր քաջասրտություն, Տրդատներն ու Ներսեսները-աշխարհաշինություն…»[11],-վստահեցնում է հոդվածագիրը:

Սրան զուգահեռ՝ «Փորձ»-ի հրապարակումներում քիչ չեն նաև ազգի ներկա տխուր վիճակի սթափ գնահատումները: Հատկապես սուր քննադատության է ենթարկվում դարերով «մեր վարած փակ ու անհաղորդ կյանքը», որի հետևանքով քաղաքակիրթ աշխարհից մեկուսացած հայը հայտնվել է քաղաքակրթական զարգացումների լուսանցքում: Ներքին անվստահությունն ու ինքնօտարումը անտարբերություն են առաջացրել նույնիսկ օտարի կարծիքի հանդեպ:

Այս ամենով հանդերձ՝ հոռետեսության երանգները «Փորձ»-ի հոդվածներում թույլ են, քանի որ խմբագրության և նրա աշխատակիցների առաջնային խնդիրը, հատկապես ռուս-թուրքական պա-

[11] «Տաճկական Հայաստանի անկախությունը», «Փորձ», 1877-1878, թիվ 1, էջ 361:

տերազմի տարիներին, ազգային լսարանին քաղաքականապես հասունացնելն ու լավատեսությամբ համակելն էր: Ուստի կարևոր են մասնավորապես մեր նշած վերջին երկու ենթակետերի ուղղությամբ այդ հրապարակումներում արված դիտարկումները:

Հայերի առաքելությունը՝ միջնորդ դառնալու Արևելքի ու Արևմուտքի միջև, գայթակղիչ գաղափար էր և հոդվածներում շրջանառվում է մի քանի անգամ: Ուշագրավ է, որ հոդվածագիրները հաճախ են մեջբերում օտարազգի գործիչների կարծիքները: Սա ազգային հարցին միջազգային հնչեղություն հաղորդելու յուրօրինակ հնարանք էր, որի մասին պետք էր տեղեկացնել ինքնամեկուսացման նիրհից արթնացող հային: «Փորձ»-ի հեղինակը օտար մատենագիրներից հղում է անում Բարոն Հակստհաուզենին: «Բոլոր նշաններից երևում է,- գրում է Հակստհաուզենը,- որ հենց այս ազգը աստվածային տեսչությամբ ընտրված է **իբրև միջնորդ քրիստոնեությունը և քաղաքակրթությունը տարածելու Արևելքում** (ընդգծումը հեղինակինն է- Դ. Պ.)**:** Տարակույս չկա, որ մեծ պատմական համաշխարհային նշանակություն ունի այն հանգամանքը, որ այս քրիստոնյա ժողովուրդը ցրված է մի մեծ տարածության վրա, Մարոկկոյից սկսած մինչև Չինաստան, և միևնույն ժամանակ նորա բոլոր անդամները կապված են միմյանց հետ հասարակական, քաղաքական ու կրոնական կապերով և մի ազգային միություն են կազմում»[12]:

«Միջնորդ դառնալու» առաքելությունը, բնականաբար, ենթադրում էր եվրոպական տերությունների կողմից հայ ազգին սատարելու և նրան պետական-քաղաքական մարմնի լիազորություններով օժտելու անհրաժեշտություն: «Փորձ»-ի հեղինակները իբրև լավագույն տարբերակ դիտարկում են Օսմանյան կայսրության տարածքում հայ ժողովրդի ինքնավարության հնարավորությունը, որ «միջոց կտա… քրդերի հարստահարություններից և տեղական վարչության անիրավություններից ազատվելու»[13]: Ընդ որում՝ ինքնավա-

---

[12] Նույն տեղում, էջ 363:

[13] «Տաճկական Հայաստանի ինքնավարությունը», «Փորձ», 1877-1878, թիվ 3, էջ 358-359:

ռություն ձեռք բերելու կարևորությունը կրկին ընդգծվում է եվրոպական մամուլում քաղաքական հայտնի դեմքերի մատնանշած փաստարկումներով: «Տաճկական, Հայաստանի անկախությունը» հոդվածում հեղինակը (ըստ երևույթին Ստ. Պալասանյանը) հանգամանորեն անդրադառնում է «Inde′pendence Belge» լրագրի էջերում Վ. Բ. ստորագրությամբ հրապարակմանը: Վերջինս աչքի է ընկնում հստակ հարցադրումներով, կառուցվածքային ամբողջականությամբ և, ըստ էության, տեսական նախադրյալների հայտ է ներկայացնում ռուս-թուրքական պատերազմից հետո կայանալիք վեհաժողովին: Այլ հարց է, թե դրանք որքանով օգտակար եղան սեփական շահերն ունեցող մեծ տերությունների դիվանագիտական խաղերում:

Հոդվածագրի հարցադրումներն էին. ու՞մ համար օգտակար կլիներ Հայաստանի ազատությունը և ինչո՞ւ, ու՞մ համար էր վնասակար, ի՞նչ կասի Տաճկաստանը և եթե չհամաձայնի Տաճկաստանը…[14]

Հոդվածում թեև առկա է միամիտ լավատեսությունը, բայց և այնպես Հայաստանի և հայ ժողովրդի դերակատարությունը քաղաքական կյանքում մատնանշելը, նրա քաղաքական ազատությունների մասին խոսք բացելը որակապես նոր փուլ էին նշանավորում դարավոր նիրհից արթնացող ազգի համար: Եվ «Փորձ»-ն այս առումով իսկապես շարունակում էր «Հյուսիսափայլ»-ի սկսած գործը:

Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի (1878 թ.) կնքումից հետո «Փորձ»-ի համարներում զգալիորեն նվազում է քաղաքական հոդվածների թիվը: Ցարական գրաքննությունը սկսում է արգելել դրանց տպագրությունը: Մասնավորապես 1879 թ. փետրվարյան համարում՝ «Ազգային տեսություն» խորագրի ներքո, խմբագիրը տալիս է հետևյալ ծանուցումը. «Ցավով սրտի հայտնում ենք, որ «Հայկական խնդիրը եվրոպական շահերի տեսակետից» վերնագ-

[14] Տե՛ս «Տաճկական Հայաստանի անկախությունը», «Փորձ», 1877-1878, թիվ 1, էջ 364-366:

ռով հոդվածը լույս չտեսավ խմբագրությունից միանգամայն անկախ պատճառներով»[15]:

Հայ ազգի քաղաքական ազատության շուրջ «Փորձ»-ի էջերում ծավալված քննարկումները հետագայում ավելի են ակտիվանում 1880-ականների երկրորդ կեսին և 90-ականներին հայ ազգային քաղաքական կուսակցությունների մամուլում: Դրանք նույնպես հանգամանալից ուսումնասիրության կարիք ունեն:

Ամփոփում

Ազգային արժեհամակարգի երկու առանցքային դրույթների՝ ազգության և քաղաքական ազատության խնդիրները 1870-ականների վերջին, կապված 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հետ, արևելահայ իրականության մեջ լուրջ քննարկումների առիթ են դառնում:

Ազգության խնդիրը՝ իբրև «տասնևիններորդ դարու նշանաբան», «Փորձ»-ի հոդվածագիրներին մղում է համակողմանիորեն քննելու հայ ազգային ինքնության, նրա դարավոր ու ներկա ընթացքի հիմնական ուղղությունները և եզրակացնելու, որ նոր ժամանակներում մեր ազգը կարող է քաղաքակրթական միջնորդ դառնալ եվրոպական և ասիական ազգերի միջև:

Այս դիտարկումները նոր շարունակություն են ստանում հայ ժողովրդի քաղաքական ազատության մասին գրված հոդվածներում: Քննության առարկա դարձնելով նրա անցած ճանապարհը և տխուր ներկան՝ «Փորձ»-ի հեղինակները, այնուհանդերձ, չեն կորցնում լավատեսությունը: Իբրև նախընտրելի գաղափար՝ շեշտվում է հայերի միջնորդական առաքելությունը Արևմուտքի և Արևելքի միջև, իսկ իբրև քաղաքական միավոր ձևավորվելու տարբերակ՝ Հայաստանի ինքնավարությունը Օսմանյան կայսրության տարածքում: Այս գաղափարները, ի դեպ, շրջանառվում են եվրոպացի մշակութային և քաղաքական գործիչների տեսակետների հիման վրա:

---

[15] «Փորձ», 1879, թիվ 2, էջ 146:

Հիշյալ երկու դրույթները, հատկապես վերջինը, հետագայում նոր զարգացումներ ստացան 1880-ականների երկրորդ կեսին և 90-ականների սկզբին ասպարեզ իջած հայ քաղաքական մամուլի էջերում:

РЕЗЮМЕ

Петросян Д. В.

ВОПРОСЫ НАЦИОНАЛЬНОСТИ И ПОЛИТИЧЕСКОЙ СВОБОДЫ В ЖУРНАЛЕ «ПОРДЗ» (1876-1881ГГ.)

Ключевые слова: *Армянский народ, восточно-армянский, западно-армянские сегменты, национальная система ценностей, консервативное течение, национальность, политическая свобода, самоуправление*

Вопросы национальности и политической свободы были удостоены особого внимания на страницах журнала «Пордз» (Тифлис, 1876-1881гг., редактор - Абгар Ованнисян), что в значительной степени обусловлено политическими событиями того времени. Имеется в виду в частности русско-турецкая война 1877-1878гг.

Авторы журнала рассматривают в своих статьях, в первую очередь, вопрос национальности, переосмысливают его в духе нового времени, что дает основание рассматривать в дальнейших публикациях также проблему политической свободы армянского народа. Они совмещены в одном целостном контексте и имеют цель наметить политическую роль и миссию будущей Армении в регионе.

SUMMARY

Petrosyan D. V.

NATIONALITY AND POLITICAL FREEDOM ISSUES IN "PORDZ" MAGAZINE (1876-1881 YEARS)

Key words: *Armenian people, Eastern Armenian, Western Armenian parts, National value system, Conservative power, Nationality, Political, Autonomy*

In the pages of "Pordz" magazine (editor Abgar Hovhannisyan, 1876-1881 years, Tiflis) a special attention has been paid to the issues of Nationality and political freedom, which was considerably conditioned by the political events of that time (in particular Russian-Turkish war in 1877-1878 years). In their articles, the authors of "Pordz" first of examined the issues of nationality, reconsidered it with the spirit of new era, which in its turn created a basis to refer the problems of political freedom of Armenian people in further publications. They are combined in one context and have a purpose to indicate the political role and mission of Armenia in the region.